կան աղբիւրների պակասութեան պատճառով, իբրեւ հետեւանք մոնղոլական պետութեան հոգեվարքին ծագած խռովութիւնների եւ ապա Լանկթամուրի եւ նորա որդիների արշաւանքների. ժողովուրդը կողոպտուած եւ աղքատացած, բնականաբար, պիտի պակասէին եւ նուիրաբերութիւններն ու շինարարութիւնները, որոնց հետ եւ կապուած էր վիմական արձանագրութիւնների ծաղկումը։ Այս երեւոյթը ընդհանուր է բոլոր վանքերի համար. բայց Թովմա Մեծոփեցու տուած տեղեկութիւնը վանքի եւ նորա սրբութեան մասին 1410 *թուին*(1), *ցոյց է տալիս, թէ վանքը շէն էր եւ պահել էր իր հռչակը, ինչպէս եւ հաստատւում է յետագայ յիշատակութիւններով։*

Սարգիս եւ Դաւիթ քահանաները 1423 *թուին մի Մաշտոց են նուիրում «ի սուրբ ուխտն Հաւուց Թառ ի դուռն սուրբ Կաթուղիկէին եւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Յարութեան եւ ամենազօր սուրբ Ամենափրկչին»։ Նուիրատուներից «Սարգիս ծերունի եւ պատուական քահանայն ի սուրբ ուխտէս Հաւոյ Թառ, զթուղթն պատրաստեաց», իսկ Դաւիթը գրիչն է, որ սկսել է Այրիվանքում եւ վերջացրել «յաստուածապահ գիւղաքաղաքիս Գառնի»*(2)*։ Ապա սրբասէր եւ կուսակրօն Մաթէոս քահանայն «յարարատեան գաւառէ, ննդեամբ ի բարձրագիտակ, յականաւոր եւ ի գերահռչակ սբ ուխտէն Հայոց Թառոյ», ՊՀԳ* (= 1424) *թուին Սանահնում Ղազար վարդապետին գրել է տալիս մի աւետարան «պաշար եւ առաջնորդ երկնաչու ճանապարհին եւ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց» որպէս յիշատակ։ Ստացողի հետ յիշատակւում են եղբօրորդին Ումեկ, «վայելող սբ աւետարանիս» եւ «ննդակից ըստ հոգւոյ հարազատի նորին սրբասէր քահանայի տ̃ր տ̃ր Յովանէս եւ մեծ Յովանէս, եւ տ̃ր Սարգիս եւ Գրիգոր եւ այլ միաբանեալք սիրով ընդ նմա», որոնք Հաւուց Թառի միաբաններն են։ «Յիշեցէք ի ք̃ս — աւելացնում է յիշատակարանը — եւ զճիան տ̃հւե̃ գիշխանն իշխանաց զմ̃ր Զալալի եւ զմ̃ր ... եւ ծաղկեալ զաւակաց նոցա եղիցի յիշատակ մասին տ̃հւե̃»*(1)*։*

Հայրապետական աթոռի Էջմիածին փոխադրութեան պատմութեան մէջ իւր աչքի ընկնող դերն ունի եւ «տէր Զաքարիա Հաւուց Թառայ ի յազատորդեաց», առաւել եւս նորընտիր կաթողիկոսին գահընկեց անելու գործում, 1441–1443 *թ.*(2)*։ Նա յիշատակուած է արդէն շատ տարիներ առաջ՝ ՊՀԲ* (= 1423) *թուին իբրեւ Հաւուց Թառի եպիսկոպոս. վերեւ յիշուած Մաշտոցի Դաւիթ գրիչը ժամանակի կաթողիկոսի հետ թուագրում է ձեռագիրը «եւ ի վերակացութեան սուրբ ուխտիս Հաւու Թառ, հեզահոգի եւ սրբասէր եւ մաքրամիտ եւ մեծազգի արհիապատիւ եպիսկոպոսի տէր Զաքարիայ»*(3)*։*

Գրիգոր Մակուեցին իւր կոնդակի մէջ ուրիշ սրբութիւնների հետ յիշում է եւ «Ամենափրկիչ սկզբնատպական պատկերը»(4)*։*

Յիշատակարանի ընկած լինելու պատճառով թուականով անյայտ մի Յայսմաւուրքի Ստեփանոս գրիչը Աստուծոյ ողորմութիւնն է խնդրում «Նաեւ մերոյ արհեպս̃ի տ̃ր Զաքարիայի սպասաւորի սբ ուխտի Ամենափրկչի»։ Ստացողն է Սարգիս վարդապետ, որ, գուցէ, նոյն լինի անմիջապէս յիշուելիք Սարգիս փակակալի հետ(5)*։*

Նոյն Ստեփանոս գրիչը՝ աբեղայ, կրօնաւոր՝ «ի թվիս հայոց. Ջ. ԺԳ (= 1464) *ի սբ յաթոռս Ամենափրկչիս, ի սբ ուխտս Հայոց Թառ» գրել է մի Ճաշոց կամ «Տարէգիրք» իւր պատանեկութեան ընկեր Դանիէլ վարդապետի խնդիրքով*(6)*. «եւ որ մի*

(1) *Թովմա Մեծոփեցի. Փարիզ.* 61։

(2) *Սրուանձտեանց. Թորոս Աղբար. Կ. Պոլիս.* 1884. *Բ.* 338 *եւ Փիրղալէմեան. Նոտարք Հայոց. Կ. Պոլիս.* 73։

(1) Ձեռ. Էջմ. N 4435 (Յաւել. 5)։

(2) *Կոստանեան. Թովմա Մեծոփեցու յիշատակարանը. Թիֆլիզ.* 1892. 52. 78. 80։ *Գրիգոր Դարանաղցի. հրատ. Մեսրոպ Վրդ. Նշանեան. Երուսաղէմ.* 1915. 314։

(3) *Փիրղալէմեան. Նոտարք.* 221։

(4) *Անդ.* 140։

(5) Ձեռ. Էջմ. N 3672։

(6) *Դանիէլ վարդապետ Սեւանեցին է, որ իւր աբեղայութեան ժամանակ գրել է Էջմ.* N 1319|1301 *ձեռագիրը. Տաթեւացու Մատթէոսի մեկնութիւնը «յերկիրս Գեղամայ ի Սեւան կղզի». «ի թվկնւն հայոց ։Ջ։* (= 1451)*»։ Ստացել է նաեւ, բացի վերեւ յիշուած Տարեգրքից՝ եւ մի աւետարան* 1471 *թուին, գրուած Աղցոց Ս. Ստեփանոսի Վարդան եպիսկոպոսի ձեռքով (Երեւանի թանգ.* N 134|129*)։ Նորա հրամանով է քանդակազարդուած Սեւանի նշանաւոր դռներից մէկը՝* 1486 *թուին։ Տե՛ս մեր յօդուածը. Անահիտ.* 1932. *թիւ* 5-6։